**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«19» 01 2017 թ.

Հ 7 86

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան

Ի պատասխան Ձեր 2016 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 02/12.12/22410-16 գրության՝ Ձեզ է ուղարկվում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակների հիմնման վերաբերյալ» համաձայնագրի նախագծի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴ. Մ. 010-1800
19. 01 2017

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Վերականգնման վարկերի բանկի (ՎՎԲ/KfW) տեղական գրասենյակների հիմնման վերաբերյալ» համաձայնագրի նախագծի /այսուհետ՝ համաձայնագրի նախագիծ/ վերաբերյալ

Համաձայնագրի նախագիծ 5-րդ կետի՝

1. «դ» ենթակետն առաջարկում ենք վերանայել և վերախմբագրել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից վճարման ենթակա սպառողական հատուկ հարկերը վճարելու պարտավորության ստանձնման մասով, քանի որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նման հարկատեսակ սահմանված չէ:

2. «է» ենթակետը, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդառաջում է ծրագրեր իրականացնող կազմակերպությունների՝ գրասենյակներում տեղացի աշխատողներին տրվող աշխատանքային թույլտվության վերաբերյալ դիմումներին, լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն ունի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղացի աշխատողներին (ենթադրվում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին) օտարերկրյա միջազգային կազմակերպություններում աշխատելու համար աշխատանքային թույլտվություն տալը խնդրահարույց է 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածով սահմանված աշխատանքի ընտրության ազատության տեսանկյունից, քանի որ այդ հարաբերությունները պետք է կարգավորվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքային պայմանագրով: